

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ձևայելով մեր գործ դրած ըուրոր ջանքերին անկարող եղանք, անցած խառնակ օրերի շնորհիւ, ամսագրիս հրատարակութեան խանգարուած կանոնաւորութիւնը վերականգնել ա՛յնպէս որ իւրաքանչիւր ամսուայ համարը լոյս տեսնի նոյն ամսուս: Պէտք է ի նկատի ունենալ որ պոստը չի ընդունում մամուլի համար որոշուած նպաստաւոր պայմաններով №№-ի տուաքումը, երբ համարը նոյն ամսուս չի յանձնուում իրան*): պէտք է անհամեմատ աւելի մեծ ծախսաւոր հաճախք վճարել այդ դէպքում. եւ այդպիսով ամսագրիս վրայ առանց այն էլ ծանրացած՝ մօտ 8 հազ. ռ. դեֆիցիտը նորանոր անակնկալներով աւելացնել... Միանգամից վերջ դնելու համար այդ անկանոնութեան՝ մենք որոշեցինք միացնել №№ 5 4 եւ եւ փոխարէնը մեր բաժանորդներին տալ ԵՐԿՐՈՐԴ յաւելուած. —մեր աշխատակից ԼԷՕԻ՝ «ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ» աշխատութիւնը, որի մաս-մաս տպագրութիւնը կը սկսուի յաջորդ համարից:

*) Ուշ սկսուած և դանդաղ ընթացող բաժանորդագրութեան պատճառով այս տարի աւելի յարմար դատեցինք պոստին վճարը ամսէ-ամիս տալու: Առհասարակ այս փոթորիկոտ տարուայ հանգամանքները բաւական աննպաստ էին ամսագրիս հրատարակութեան համար: